# Ծամերուս ծանրութենեն / Tsamerus tsanrut'enen

Չափավոր

**Moderato**




1. — Ծամերուս ծանրութենեն
Ծամթել կըտրավ ծովն ի հընկավ:
— Լողվորի մեկ լե ես իմ,
Չըմ հանի ծամթելն ի ծովեն:

2. — Զիմ գըլխի օսկին կիտամ,
Զիմ ծամթել հան ի ծովերուց:
— Ինչ կենեմ գըլխի օսկին,
Չըմ հանի ծամթել ծովերուց:

3. — Քըթիս խըզեն քեզի կիտամ,
Զիմ ծամթել հան ի ծովերուց:
— Ինչ կենեմ քըթի խըզեն,
Չըմ հանի ծամթել ծովերուց:

1. — Tsamerus tsanrut'enen
Tsamt'el kətrav tsovn i hənkav.
— Loghvori mek le yes im,
Ch'əm hani tsamt'eln i tsoven.

2. — Zim gəlkhi oskin kitam,
Zim tsamt'el han i tsoveruts'.
— Inch' kenem gəlkhi oskin,
Ch'əm hani tsamt'el tsoveruts'.

3. — K'ət'i khəzen k'ezi kitam,
Zim tsamt'el han i tsoveruts'.
— Inch' kenem k'ət'i khəzen,
Ch'əm hani tsamt'el tsoveruts'.

4. — Զիմ մայդան ճակատ կիտամ,
Զիմ ծամթել հան ի ծովերուց:
— Ինչ կենեմ մայդան ճակատ,
Չըմ հանի ծամթել ծովերուց:

5. — Զիմ մեջքի քամար կիտամ,
Զիմ ծամթել հան ի ծովերուց:
— Ինչ կենեմ մեջքի քամար,
Չըմ հանի ծամթել ծովերուց:

6. — Զիմ գոտուց բարձր կիտամ,
Զիմ ծամթել հան ի ծովերուց:
— Ինչ կենեմ գոտուց բարձր,
Չըմ հանի ծամթել ծովերուց:

7. — Զիմ գոտուց ցածր կիտամ,
Զիմ ծամթել հան ի ծովերուց:
— Լողվորի մեկ լե ես իմ,
Կըհանիմ ծամթելն ի ծովեն:

4. — Zim maydan chakat kitam,
Zim tsamt'el han i tsoveruts'.
— Inch' kenem maydan chakat,
Ch'əm hani tsamt'el tsoveruts'.

5. — Zim mech'k'i k'amar kitam,
Zim tsamt'el han i tsoveruts'.
— Inch' kenem mech'k'i k'amar,
Ch'əm hani tsamt'el tsoveruts'.

6. — Zim gotuts' barts'ər kitam,
Zim tsamt'el han i tsoveruts'.
— Inch' kenem gotuts' barts'ər,
Ch'əm hani tsamt'el tsoveruts'.

7. — Zim gotuts' ts'atsər kitam,
Zim tsamt'el han i tsoveruts'.
— Loghvori mek le yes im,
Kəhanim tsamt'eln i tsoven.